ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՄՆՆՄԱԾՁԲ-22/61

ք. Երևան «25» 07 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Գագիկ Սաֆարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Ա. Հովհաննիսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել կրթական օբյեկտների հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **15 աշխատանքային օրվա** ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 392971 (երեք հարյուր իննսուներկու հազար ինը հարյուր յոթանասունմեկ) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ընդ որում՝ «ՀՀ կառավարության և ԱՄՆ կառավարության միջև համագործակցության վերաբերյալ մարդասիրական և տեխնիկական տնտեսական օգնության վերահսկումը հեշտացնելու մասին» 1992թ. դեկտեմբերի 15-ին ստորագրված համաձայնագրով նախատեսված հարկային, մաքսային և պարտադիր վճարների արտոնություններից օգտվելու մասին» ՀՀ օրենքով և ՀՀ պետական եկամուտների նախարարի 15.09.2000թ. N02/1054 հրամանով հաստատված հրահանգով կիրառվում է ԱԱՀ-ից ազատման արտոնությունը, որով գործում է ավելացված արժեքի հարկից ազատման պայմանը:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա:

Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ՝ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ,
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3	ք. Երևան, Կոմիտասի պող. 16շ., բն.22,
Կառավարական տուն 2,	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ,
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 220563331143000,
գործառնական վարչություն	ՀՎՀՀ 00146655
Հ/Հ 900000908153	
ՀՎՀՀ 02698732	
Գլխավոր քարտուղար	Տնօրեն ---------- Ա. Հովհաննիսյան
---------- Գ.Սաֆարյան	(ստորագրություն)
(ստորագրություն)	
Կ.Տ.	

Հավելված 1
«25» «07» 2022թ. կնքված
թիվ ՀՀԿԳՄՆՄԱԾՁԲ-22/61 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ								
Հ/Բ	ԳՄԱ դասակարգման կոդ (CPV)	Անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը, ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետները*
			Գնման առարկա է հանդիսանում				Ըստ օբյեկտների	
1	98111140/12	հեղինակային հսկողության ծառայություններ-1	«Վանաձորի Ա. Պուշկինի անվան թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերումը	դրամ	25721	1	ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա 23	Ծառայության մատուցումը սկսվում է 2022թ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից և իրականացվում է նրթական օբյեկտների հիմնանորոգման և բարելավման աշխատանքներին զուգահեռ:
2	98111140/13	հեղինակային հսկողության ծառայություններ-2	«Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերումը	դրամ	26229	1	ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Զորավար Անդրանիկի 71	
3	98111140/14	հեղինակային հսկողության ծառայություններ-3	«Ստեփանավանի Սուրբ Գրիգոր Լուսավորչի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերումը	դրամ	19462	1	ՀՀ Լոռու մարզ, ք. Ստեփանավան, Սուրբ Նշանի 39	
4	98111140/15	հեղինակային հսկողության ծառայություններ-4	«Վանաձորի Վ. Համբարձումյանի անվան թիվ 25 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերումը	դրամ	14780	1	ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Վ. Համբարձումյանի 2	
5	98111140/16	հեղինակային հսկողության ծառայություններ-5	«Վանաձորի Ղևոնդ Ալիշանի անվան թիվ 27 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերումը	դրամ	29857	1	ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տարոն 4, Զեյթունի ¾	
6	98111140/17	հեղինակային հսկողության ծառայություններ-6	«Ստեփանավանի Ս. Շահումյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերումը	դրամ	19815	1	ՀՀ Լոռու մարզ, ք. Ստեփանավան, Բաղրամյան 67	
7	98111140/18	հեղինակային հսկողության ծառայություններ-7	«Վանաձորի Պ. Սևակի անվան թիվ 30 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերումը	դրամ	20562	1	ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տարոն 2, ՔՇՀ 4, Ռիկրաինական պող.10-2	
8	98111140/19	հեղինակային հսկողության ծառայություններ-8	«Լեռնապատի Ե. Դալլաքյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերումը	դրամ	14648	1	ՀՀ Լոռու մարզ, գ. Լեռնապատ, 30-րդ փողոց	
9	98111140/20	հեղինակային հսկողության ծառայություններ-9	«Սարատովկայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների	դրամ	15455	1	ՀՀ Լոռու մարզ, գ.Սարատովկա	

			ձեռքբերումը				
10	98111140/21	հեղինակային հսկողության ծառայություններ-10	«Սպիտակի Շառլ Ազնավուրի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերումը	դրամ	21715	1	ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Պանրագործների 44 փող.
11	98111140/22	հեղինակային հսկողության ծառայություններ-11	«Ալավերդու Ս. Սպանդարյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերումը	դրամ	27522	1	ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի, Էնգելսի 2/1
12	98111140/23	հեղինակային հսկողության ծառայություններ-12	«Շամլուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերումը	դրամ	26440	1	ՀՀ Լոռու մարզ, գ. Շամլուղ 8-րդ փողոց, շենք 1, 2
13	98111140/24	հեղինակային հսկողության ծառայություններ-13	«Ալավերդու թիվ 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերումը	դրամ	27565	1	ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի, Սարահարթ 2/26ա
14	98111140/25	հեղինակային հսկողության ծառայություններ-14	«Սպիտակի Դ. Տեր-Սիմոնյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերումը	դրամ	16798	1	ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Ս.Ավետիսյան
15	98111140/26	հեղինակային հսկողության ծառայություններ-15	«Վանաձորի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման և բարելավման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերումը	դրամ	86402	1	ՀՀ Լոռու մարզ., ք. Վանաձոր, Բաղրամյան նրբ. 22

Տեխնիկական առաջադրանք

1. Կրթական օբյեկտների հիմնանորոգման և բարելավման աշխատանքների իրագործման բոլոր փուլերում դրանց նկատմամբ նկատմամբ հեղինակային հսկողության (այսուհետ՝ Հսկողություն) ծառայության մատուցում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 1998 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 143 «Շինարարության նկատմամբ հեղինակային հսկողության իրականացում» հրամանով հաստատված:
2. Հեղինակային հսկողության իրականացում համաձայն հաստատված նախագծերի:

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Գ. Սաֆարյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Ա. Հովհաննիսյան

(ստորագրություն)

Կ.Տ

25 07 Հավելված N 2
« » « » 2022թ. կնքված
թիվ ՀՀԿԳՄՆՄԱԾՁԲ-22/61 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության												
Չափաբաժին	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ.-ին, ըստ ամիսների, այդ թվում									Ընդամենը
			1-ին կիսամյակ			9 ամիս			տարի			
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
1	98111140/12	հեղինակային հսկողության ծառայություններ-1				11410	11410	11410	25721	25721	25721	25721
2	98111140/13	հեղինակային հսկողության ծառայություններ-2				11640	11640	11640	26229	26229	26229	26229
3	98111140/14	հեղինակային հսկողության ծառայություններ-3				8640	8640	8640	19462	19462	19462	19462
4	98111140/15	հեղինակային հսկողության ծառայություններ-4				6560	6560	6560	14780	14780	14780	14780
5	98111140/16	հեղինակային հսկողության ծառայություններ-5				13260	13260	13260	29857	29857	29857	29857
6	98111140/17	հեղինակային հսկողության ծառայություններ-6				8790	8790	8790	19815	19815	19815	19815
7	98111140/18	հեղինակային հսկողության ծառայություններ-7				9120	9120	9120	20562	20562	20562	20562
8	98111140/19	հեղինակային հսկողության ծառայություններ-8				6500	6500	6500	14648	14648	14648	14648
9	98111140/20	հեղինակային հսկողության ծառայություններ-9				6860	6860	6860	15455	15455	15455	15455

10	98111140/21	հեղինակային հսկողության ծառայություններ-10				9630	9630	9630	21715	21715	21715	21715
11	98111140/22	հեղինակային հսկողության ծառայություններ-11				12210	12210	12210	27522	27522	27522	27522
12	98111140/23	հեղինակային հսկողության ծառայություններ-12				11730	11730	11730	26440	26440	26440	26440
13	98111140/24	հեղինակային հսկողության ծառայություններ-13				12230	12230	12230	27565	27565	27565	27565
14	98111140/25	հեղինակային հսկողության ծառայություններ-14				7470	7470	7470	16798	16798	16798	16798
15	98111140/26	հեղինակային հսկողության ծառայություններ-15				38320	38320	38320	86402	86402	86402	86402

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____ Գ. Սաֆարյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

_____ Ա. Հովհաննիսյան

(ստորագրություն)

Կ.Տ